



# Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների  
կողմից 2021թ. հունիսի 20-ի  
ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների  
նախընտրական քարոզչության  
սահմանված կարգի պահպանման վերաբերյալ՝ ըստ  
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի  
մշտադիտարկման արդյունքների



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՊՎԻ

## Նախաբան

2020 թվականի Արցախյան երկրորդ պատերազմը Հայաստանի Հանրապետությունում ձևավորեց ռազմա-քաղաքական և բարոյա-հոգեբանական այնպիսի իրավիճակ, որի հանգուցալուծումը գործող իշխանությունները տեսան ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների միջոցով հասարակության քաղաքական և հանրային համաձայնություն ձևավորելու մեջ:

Ընտրական գործընթացի թափանցիկությունն ապահովելու, ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ոչ խտրական պայմանների և ընտրողների կողմից անկողմնակալ, ստուգված և հավաստի տեղեկատվություն ստանալու իրավունքը ապահովելու գործում շատ կարևոր է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) դերը՝ որպես տեսալսողական մեդիալորտը կարգավորող անկախ սահմանադրական մարմին:

Հանրապետությունում ընտրական գործընթացները կարգավորում են՝ ՀՀ Սահմանադրությունը, «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքը և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքը, ինչպես նաև այլ իրավական ակտերը, որոնցից առանձնացնենք երկուսը՝

- «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն Հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 27-ի թիվ 68-Ս որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը»:

Մեթոդաբանությամբ սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքում ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների (այսուհետ՝ Հեռարձակողներ) կողմից ընտրություններին մասնակցող կուսակցու-

թյունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման և Հեռարձակողների նախընտրական քարոզչության գործունեության արդյունքների հաշվարկման գործընթացը:

- «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 18-ի թիվ 64-Ա որոշմամբ հաստատված և Հանձնաժողովի կայքում հրապարակված՝ 2021 թվականի հունիսի 20-ի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության մասնակից կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին՝ հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության կողմից տրամադրվող վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը:

### **Նախընտրական քարոզչության գործընթաց**

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը 2021 թվականի մայիսի 31-ին հանդես եկել կոչով, որում դիմելով տեսալսողական ծառայություններ մատուցող բոլոր ընկերություններին, հորդորել է, որ ստեղծված բարդ ու պատասխանատու ժամանակահատվածում նրանց գործունեությունը չառաջացնի նոր բաժանարար գծեր ու դառնա տարբեր քաղաքական ուժերի ու ֆինանսական խմբերի կցորդ, այլ նպաստի հանրային և քաղաքացիական համերաշխությանը: Հաշվի առնելով ստեղծված ճգնաժամային իրողությունները, Հանձնաժողովը կոչ է արել նախընտրական այս ժամանակահատվածում չառաջնորդվել սեփական համակրանքներով ու հակակրանքներով, այլ ապահովել բազմակարծությունը, օրենսդրությամբ սահմանված պատասխանի ու հերքման հնարավորությունները: Հանձնաժողովը դիմել է նաև ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերին, պատգամավորության թեկնածուներին, նախընտրական շտաբների աշխատակիցներին, ընտրական հանձնաժողովների անդամներին, դիտորդներին, իրավապահ մարմինների ներկայացուցիչներին՝ ապահովել օպերատիվ կերպով ու ամբողջական ծավալով տեղեկատվություն ստանալու մատչելիությունը՝ հարգանքով վերաբերվելով լրագրողների ու լրատվամիջոցների գործունեությանը:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովում հունիսի 1-ին, 2-ին և 3-ին կազմակերպվել էին սեմինար-դասընթացներ ՀՀ Ազգային Ժողովի արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական շտաբների ներկայացուցիչների և տեսալսողական ծրագրեր մատուցողների ներկայացուցիչների համար:

Սեմինար-դասընթացներին ներկայացվել են ԱԺ արտահերթ ընտրությունների ու նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հեռարձակողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը, նախընտրական քարոզչությունը կարգավորող օրենսդրության պահանջները:

Միաժամանակ մանրամասն ներկայացվել են նաև նախընտրական շրջանում հեռարձակողների իրավունքները և պարտականություններ, ուղիղ եթերով ցուցադրվող հաղորդումների ժամանակ էթիկայի կանոնների չպահպանման հետևանքով օրենսդրությամբ առաջացող և կիրառվող պատժամիջոցները:

ՀՀ ԱԺ արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին վճարովի կարգով տրամադրվող էթերաժամանակի և դրա սակագնի վերաբերյալ մինչև 2021թ. մայիսի 21-ը հայտարարություն են տարածել նաև տարբեր սփռում ունեցող 36 տեսալսողական մեդիաձառայություն մատուցողներ, որից 13-ը լսողական ձառայություն մատուցողներն են, մասնավորապես.

- հանրապետական սփռում ունեցող 6 տեսալսողական ծրագիր Հեռարձակող (Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք, Կենտրոն, Շանթ, Արմենիա, Երկիր Մեդիա) և 4 լսողական ծրագիր Հեռարձակող (Առաջին ծրագիր, Ռադիո Ջան, Ռադիո Հայ, Երևան ՖՄ),
- մայրաքաղաքային սփռում ունեցող 5 տեսալսողական ծրագիր Հեռարձակող (Ֆրինյուզ, Արմնյուզ, 5-րդ ալիք, 21TV, Նոր Հայաստան) և 7 լսողական ծրագիր Հեռարձակող (Ավտոռադիո, Եվրոպա պլուս, Հայ ՖՄ, Իմպուլս ռադիոծրագիր, Ռադիո Շանթոն Երևան, Ռադիո Մարշալ, Արմնյուա ՖՄ),
- հանրապետության տարբեր մարզերում ցանցային օպերատորների միջոցով գործող

5 Հեռարձակող,

- մարզային սփռում ունեցող 2 լսողական ծրագիր Հեռարձակող (Շանթ ռադիոծրագիր, Միգ ռադիո):

Հանձնաժողովը, հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության եթերից օգտվելու հնարավորությունն ավելի մատչելի դարձնելու նպատակով, հանրային հեռուստաընկերության վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանել է 45 000 դրամ (ներառյալ ԱԱՀ), ի տարբերություն ԱԺ 2018 և 2017 թվականների ընտրությունների, որոնց ընթացքում այն սահմանվել էր համապատասխանաբար 48 000 և 60 000 դրամ (ներառյալ ԱԱՀ): Իսկ հանրային ռադիոյի վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանվել է՝ 1800 դրամ (ներառյալ ԱԱՀ), ի տարբերություն նախորդ երկու ընտրությունների, երբ այն սահմանվել էր 2 000 դրամ (ներառյալ ԱԱՀ):

Հանձնաժողովը 2021թ. հունիսի 7-ից մինչև հունիսի 20-ը ներառյալ իրականացրել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող Հեռարձակողների՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն: Հանձնաժողովը տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների հեռարձակած տեսալսողական ծրագրերի ՀՀ ընտրական օրենսդրությանը համապատասխանության մշտադիտարկումն իրականացրել է.

- տեսալսողական ծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) ուղղակի դիտարկման արդյունքները.
- տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյաններում մուտքագրված տվյալները և Հեռարձակողներից ստացված տեղեկատվությունը.
- ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և (կամ) նրանց ներկայացուցիչների Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը.
- Հեռարձակողների կողմից Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության խախտումների մասին զանգվածային լրատվամիջոցների

հրապարակումները.

- պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիների կողմից Հանձնաժողով պաշտոնապես ներկայացրած տեղեկատվությունը:

Հանձնաժողովը ուղղակի դիտարկումը իրականացրել է Հեռարձակողների կողմից հեռարձակվող ծրագրերի վերահսկման պատահական ընտրանքի և հավասարաչափ բաշխման սկզբունքով:

Ի հետևություն մշտադիտարկման արդյունքների Հանձնաժողովը արձանագրում է, որ նախընտրական քարոզչության ընթացքում Հեռարձակողների կողմից վճարովի եթերաժամի մեկ բուպեի գինը փոփոխության չի ենթարկվել:

Հեռարձակողները ըստ սահմանված կարգի 2021 թավականի հունիսի 20-ի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում Հանձնաժողով տեղեկատվություն են ներկայացրել իրենց կողմից հեռարձակված ծրագրերի մասին: Ստացված տեղեկատվությունը սվյալներ է պարունակել յուրաքանչյուր ընկերության կողմից ընտրությանը մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին.

- անվճար կարգով տրամադրված եթերաժամանակի,
- վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակի,
- նրանց և (կամ) նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ հաղորդումների ընդհանուր տևողության,
- լրատվական ծրագրերում նրանց նախընտրական քարոզչության միջոցառումների լուսաբանման ընդհանուր տևողության վերաբերյալ:

Ստացված տեղեկությունները համադրվել են Հանձնաժողովի ուղղակի դիտարկման արդյունքների հետ, համակարգվել և ամփոփվել են Հանձնաժողովի կողմից կազմված տեղեկանքում, որն օրենքով սահմանված կարգով և ժամկետում՝ 2021 թվականի հունիսի 16-ին, հրապարակվել է Հանձնաժողովի կայքէջում, ինչպես նաև նշված ժամկետում ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Հայաստանի Հանրապետությունում գործող գրեթե բոլոր Հեռարձակողները մասնակցել են նախընտրական քարոզչությանը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ քարոզչությանը մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին ամենա շատ էթերաժամանակը տրանմադրվել տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից: Նախընտրական քարոզչության մասնակիցները կարողացել են ազատ քարոզչություն իրականացնել:

Մի քանի լրատվամիջոցներ կազմակերպել են բանավեճեր, այդ թվում նաև հանրային Հեռարձակողը, որի էթերում եղել է չորս բանավեճ: Սակայն մի քանի կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ղեկավարներ հրաժարվել են մասնակցել հանրային հեռուստատեսության կողմից կազմակերպված երկու ամփոփիչ բանավեճերին:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում առանձնահատուկ ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքում խիստ կարևոր էր Հայաստանի հանրային Հեռարձակողի կողմից կազմակերպված և բավականին հաջողված ձևով իրականացված քաղաքական բանավեճը՝ 2021 թ. հունիսի 20-ին ՀՀ ԱԺ արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների, ընտրացուցակների առաջին համարներում ներկայացված անձանց, ինչպես նաև, այդ ցուցակների առաջին տասնյակը ներկայացնող թեկնածուների միջև: Կարծում ենք, որ այդ քաղաքական բանավեճերը կարող էին ավելի արդյունավետ լինել, եթե Հանրային հեռարձակողի խորհուրդը մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը հաստատեր եւ հրապարակեր քաղաքական բանավեճի անցկացման ձևաչափը:

Միաժամանակ Հանձնաժողովը կիսում է Ընտրությունների միջազգային դիտորդների ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ այն կարծիքը, որ «ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի զրուցակիցները ընդգծել են կոշտ, անհանդուրժող և սադրիչ հոետորաբանության աճող ծավալը քաղաքական ասպարեզում: Քաղաքական միջավայրը, որում տարբեր կարծիքները պարբերաբար բխվում են ատելության և կշտամբանքի, մասնավորապես սոցիալական ցանցերում, բացասաբար է ազդում հանրային դիսկուրսի վրա» և այդ ամենը փոխանցվում է նաև տեսալսողական մեդիաձառայություն մատուցածների կողմից հեռարձակված

հաղորդումներում:

Հանձնաժողովի կարծիքով անհրաժեշտ է անցկացնել օրենսդրական փոփոխություններ, որոնք կչեզոքացնեն հասարակության վրա ծանր հետևանք թողնող ատելության խոսքի, ապատեղեկատվության, կողմանկալության և կոշտ վարքագծի դրավորումները Հեռարձակողների եթերում:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից 2021 թվականի հունիսի 12-ի գրությամբ հարցադրումները վերաբերվում էին կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված գովազդային տեսահոլովակների հեռարձակման օրինաչափությանը (այդ թվում նաև հեռուստաընկերության կարծիքով երրորդ անձանց համար առաջին հայացքից ակնհայտ վիրավորական, զրպարտչական բնույթ կրող տեսահոլովակներ), որին Հանձնաժողովը 2021 թվականի հունիսի 14-ին պատասխանել է և հաշվի առնելով կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական քարոզչության տեսահոլովակները հեռարձակելու հարցման վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումների կարևորությունը և հրատապությունը, այն հրապարակվել է նաև Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Հանձնաժողովի կողմից ընտրությունների նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում տեսալսողական ծառայություն մատուցողների նկատմամբ հարուցվել են վարչական վարույթներ նախընտրական քարոզչական տեսալսողական հաղորդումները առանց էկրանի վրա պարտադիր անընդմեջ «Նախընտրական քարոզչություն» լուսագրի ուղեկցությամբ, իսկ լսողական հաղորդումների դեպքում յուրաքանչյուր հաղորդման ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ չհիշեցման հիմքով, ինչպես նաև ընտրություններին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քարոզչության համար արգելված ժամանակահատվածում քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ հեռարձակման հիմքով: Իսկ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության «Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք» և «Առաջինի լրատվական ալիք» տեսալսողական ծրագրերի կողմից ընտրությունների Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ



քարոզչության համար արգելված ժամանակահատվածում քարոզչա-կան կամ քարոզչությանը նպաստող նյութ հեռարձակման հիմքով կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը ուղարկվել է Հանրային հեռարձակողի խորհուրդ:

Հաշվետու ժամանակահատվածին վերաբերող դիմում-բողոքներ չեն ստացվել պետական այլ մարմիններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, զանգվածային լրատվամիջոցներից և քաղաքացիներից:

Կից բերված աղյուսակում ներկայացված են նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիա ծառայություն իրականացնող ընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հատկացված եթերաժամանակի վերաբերյալ տվյալներ:

Ըստ ներկայացված աղյուսակի կարելի է փաստել, որ առկա է առանձին հեռուստառադիոընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հատկացված եթերաժամանակի որոշակի անհամաչափություն:

Հանձնաժողովն իրականացրած ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հանգել է եզրակացության, որ այդ անհամաչափությունը պայմանավորված է կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից իրենց նախընտրական քարոզչության գործընթացների պլանավորման և իրակա նացման միջոցառումների քանակական, տարածքային և ժամանակացուցային բաշխման տարբերություններով: Այդ տարբերությունները պայմանավորված են նաև կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում առկա միջոցների, անվճար և վճարովի եթերաժամանակի օգտագործման, հեռուստառադիոծրագրերում հյուրընկալվելու պատրաստակա- մության աստիճանի առանձնահատկություններով:

Այսպիսով, ելնելով վերոնշյալից Հանձնաժողովը տեսալսողական մեդիա ծառայություն մատուցող ընկերությունների կողմից տրամադրած և՛

կուսակցությունների և՛ կուսակցությունների դաշինքների կողմից օգտագործված եթերաժամանակի արձանագրված անհամաչափությունները՝ որպես տեսալսողական մեդիա ծառայություն մատուցող ընկերությունների կողմից նախընտրական քարոզարշավին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմաններ ապահովելու խախտում չի գնահատում:

## 07.06.2021-18.06.2021

կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերա- ժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժա- մանակը	այլ հաղորդում- ներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկում- ներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	լրատվական թողարկում-ներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերա- ժամանակը
«ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	68' 09"	2' 33"	1,725' 41"	740' 28"	2,466' 09"
«ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	75' 00"	607' 37"	2,917' 36"	1,260' 51"	4,178' 27"
«ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	83' 54"	5,337' 26"	6,771' 22"	2,958' 03"	9,729' 25"
«ԶԱՐԹՈՒՔ» ԱԶԳԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	86' 04"	245' 23"	2,311' 27"	718' 15"	3,029' 42"

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	19' 59"	172' 08"	2,201' 23"	730' 50"	2,932' 13"
«ՊԱՏԻՎ ՈՒՆԵՍ» ԴԱՇԻՆՔ	91' 00"	2,998' 18"	2,877' 26"	1,456' 47"	4,334' 13"
ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՅԴԵՆԻՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	15' 46"	4' 05"	1,252' 25"	684' 05"	1,936' 30"
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՀԱՊ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	21' 33"	0' 00"	1,431' 04"	673' 37"	2,104' 41"
ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	90' 00"	2,839' 30"	2,898' 26"	1,494' 11"	4,392' 37"
ՄԵՐ ՏՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ Է ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	76' 00"	2,052' 00"	2,540' 31"	881' 03"	3,421' 34"
«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	30' 00"	91' 46"	2,132' 02"	850' 03"	2,982' 05"
«ՀԱՅՈՑ ՀԱՅԴԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	13' 00"	179' 00"	1,845' 45"	544' 33"	2,390' 18"

ԱԶԱՏ ՀԱՅՐԵՆԻՔ ԴԱՇԻՆՔ	27' 40"	254' 57"	1,757' 04"	808' 08"	2,565' 12"
«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	73' 59"	2,811' 46"	1,926' 43"	1,432' 49"	3,359' 32"
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24' 03"	103' 51"	1,720' 52"	625' 50"	2,346' 42"
«5165 ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	29' 45"	252' 42"	2,169' 02"	752' 54"	2,921' 56"
«ՔԱՂԱՔԱՅՈՒ ՈՐՈՇՈՒՄ» ՍՈՑԻԱԼ- ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	29' 26"	0' 00"	1,715' 06"	666' 46"	2,381' 52"
«ՇԻՐԻՆՑԱՆ- ԲԱԲԱԶԱՆՑԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ»	68' 42"	222' 32"	1,681' 23"	975' 42"	2,657' 05"
«ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	30' 00"	155' 14"	1,794' 35"	616' 52"	2,411' 27"

ՎԵՐԵԼՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	87' 55"	1' 00"	1,548' 47"	689' 21"	2,238' 08"
ԱԶՍԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	17' 24"	0' 00"	1,071' 21"	767' 28"	1,838' 49"
«ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	4' 00"	8' 08"	0' 00"	54' 03"	54' 03"
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	68' 57"	0' 00"	996' 22"	681' 50"	1,678' 12"
ՀԱՅԱՍՏԱՆ ԴԱՇԻՆՔ	87' 58"	7,547' 33"	3,894' 05"	2,110' 56"	6,005' 01"
«ԱԶԳԱՅԻՆ- ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԵՎԵՈ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	73' 54"	50' 44"	2,066' 17"	838' 32"	2,904' 49"
«ԻՆՔՆԻՇԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	26' 40"	39' 57"	1,167' 37"	736' 00"	1,903' 37"